# ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2005)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

# ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

### *Տնտեսական աճ*

2005 թ. հունվար-հուլիսին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 11.6%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է շինարարության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 3.8 տոկոսային կետ), ծառայությունների (3.2) և գյուղատնտեսության (2.4) աճով:

ՀՆԱ դեֆլյատորը 2005 թ. հունվար-հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 103.7%:

### *Գնաճ*

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թ. հուլիսին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 4.5%-ով անկում, ընդ որում, պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների նպաստումը գնաճին կազմել է համապատասխանաբար - 4.2, - 0.03 և - 0.04 տոկոսային կետ:

2004 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների անկումը կազմել է 3.1%: 2005 թ. հուլիսին, 2004 թ. հուլիսի համեմատությամբ սպառողական գների ինդեքսը կազմել է 97.0%, իսկ 2005 թ. հունվար-հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 101.5%:

Բնականոն գնաճը 2005 թ. հուլիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, կազմել է -0.42%, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ -0.56%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 0.31%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ -0.78%:

### *Արտաքին հատված*

2005 թ. հունվար-հուլիսին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 523.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 31.9 %-ով: Արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է արտահանման մեջ 33.8 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 38.7 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 190.2 % և 19.5 % աճով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հաշվի առնելու՝ արտահանումն աճել է 41.1 %-ով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 933.2 մլն ԱՄՆ դոլար՝ 28.2 %-ով ավելանալով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները հաշվի առնելու՝ ներմուծումն ավելացել է 27.4 %-ով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ 23.2 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների 30.7 % աճով: Բացի այդ, աճել են նաև ներմուծման մեջ 15.6 % կազմող «Հանքահումքային ապրանքներ», 8.3 % կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և 11.1 % կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 29.1 %, 61.5 % և 37.6 % աճով:

Արդյունքում, 2005 թ. հունվար-հուլիսին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 23.8%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 18.2%-ով) և կազմել է 410.2 մլն ԱՄՆ դոլար:

### *Պետական հատված*

Հուլիսին, ինչպես և արձանագրվել էր տարվա առաջին կեսին, պետական բյուջեի եկամուտները ծրագրվածի համեմատությամբ ունեցել են բարձր կատարողական: Եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 30.4 մլրդ դրամ՝ ծրագրված 29.3 մլրդ

դրամի փոխարեն. հարկային եկամուտները կազմել են 28.6 մլրդ դրամ (ծրագրային՝ 27.6 մլրդ դրամի), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները ծրագրվածին համապատասխան՝ 1.7 մլրդ դրամ: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են մոտ 1.3 մլրդ դրամ (առաջին կիսամյակում և նախորդ տարվա հուլիսին՝ միջինը 1.0 մլրդ դրամ):

Հուլիսին հարկերի հավաքագրումն ունեցել է անհամաչափ բնույթ՝ ամսվա վերջին երեք օրը հավաքագրվել է ամսվա հարկերի 19.5%-ը՝ առաջին եռամսյակի միջին 19.7%-ի և երկրորդ եռամսյակի միջին 16%-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը հուլիսին նույնպես գերակատարվել են՝ ծրագրով նախատեսված 35.6 մլրդ դրամի փոխարեն կազմելով 37.1 մլրդ դրամ: Բյուջեի պակասուրդը կազմել է 6.7 մլրդ դրամ, որը ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 0.5 մլրդ դրամ զուտ մուտքերի, 0.1 մլրդ դրամ արտաքին ֆինանսավորման և 7.3 մլրդ դրամ ՀՀ ԿԲ-ում Կառավարության միջոցների նվազման հաշվին: Ընդ որում, ամսվա արդյունքում ՀՀ կառավարության ավանդները մարվել են 0.4 մլրդ դրամով, իսկ Գանձապետարանի միասնական հաշվում պետբյուջեի միջոցները նվազել 6.9 մլրդ դրամով:

### *Դրամավարկային քաղաքականություն*

Հուլիսի սկզբին ՀՀ կենտրոնական բանկը հանդես է եկել դրամավարկային ցուցանիշների՝ երկրորդ կիսամյակի ծրագրային մակարդակների վերանայման հայտարարությամբ, ինչը հիմնված էր առաջին կիսամյակի արդյունքների վրա: Տարեսկզբից դիտված դրամի փոխարինման երևույթը և դրա արդյունքում փողի պահանջարկի կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, դրամի պահանջարկի աճի բարձր տեմպերի դրսևորման, որին համապատասխան Կենտրոնական բանկն ապահովել է փողի մեծ առաջարկ: Այսինքն, հունիսն ավարտվել էր փողի բազայի ծրագրված ցուցանիշից ավելի քան 26.0 մլրդ դրամով գերազանցմամբ, ինչի պարագայում ԿԲ-ն նույնչափով ճշգրտել է հուլիսի ծրագրային ցուցանիշը և նախատեսել փողի բազան կառավարել տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին մոտ, որի պարագայում ակնկալվում էր երրորդ եռամսյակի վերջին ապահովել 170.0 մլրդ դրամ մակարդակ:

Փաստացի արդյունքներով փողի բազան հուլիսին ավելացել է 18.8 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 169.6 մլրդ դրամ: Փողի նման մեծածավալ պահանջարկի դրսևորումը վկայում է այն մասին, որ այս ամիս դրամի փոխարինման երևույթն ընթացել է ավելի բարձր տեմպերով, ինչի ճշգրիտ գնահատումը Կենտրոնական բանկի կողմից դժվար է շրջանառությունում առկա կանխիկ արտարժութային հոսքերի վերաբերյալ վիճակագրության բացակայության հետևանքով: Այդ պատճառով արդեն հուլիսի վերջին ձեռք է բերվել փողի բազայի եռամսյակի վերջի համար նախատեսված մակարդակը:

Փողի առաջարկի աճի գերակշիռ մասը՝ 15.6 մլրդ դրամն ապահովվել է ԿԲ ՁԱԱ-ի և 3.2 մլրդ դրամը՝ ՁՆԱ-ի փոփոխությունների հաշվին:

Ամսվա ընթացքում ԿԲ ՁԱԱ-ն համալրվել են արտարժույթի շուկայում ԿԲ կողմից առքի գործառնությունների իրականացման և ԿԲ-ում բանկերի՝ արտարժույթով թղթակցային հաշիվների մնացորդի ավելացման արդյունքում՝ համապատասխանաբար 8.6 մլրդ և 4.9 մլրդ դրամ: ՁԱԱ-ի աճին նպաստել են նաև նախորդ ամսվա ընթացքում կնքված արտարժույթի տրամադրման սվոփի մարումն ու արտաքին պահուստներից եկամուտների ստացումը՝ 2.4 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Միևնույն ժամանակ, հուլիսին ԿԲ-ն իրականացրել է Կառավարության արտաքին պարտքի տոկոսագումարների և անդամակցության 214 մլն դրամ գումարի վճարում՝:

ԿԲ ՁՆԱ-ի կառուցվածքում համապատասխանաբար 5.7 մլրդ և 1.2 մլրդ դրամով աճել են Կառավարության զուտ պարտավորությունների և բանկերի պարտավորությունների ցուցանիշները: Առաջինի դեպքում աճն հիմնականում ապահովվել է պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով միասնական հաշվից միջոցների ծախսման, իսկ երկրորդի դեպքում՝ վերոնշյալ սվոփ գործառնության մարման հաշվին: Վերջինս արտահայտվել է նաև ԿԲ զուտ այլ ակտիվներում՝ հանգեցնելով դրանց 982 մլն դրամով նվազման:

ԿԲ ՁՆԱ-ն նվազել են նաև Կենտրոնական բանկի կողմից կիրառված սեփական արժեթղթերի տեղաբաշխման գործիքի ազդեցությամբ, որը, արտարժույթի մեծ առաջարկի պայմաններում, հիմնականում նպատակաուղղված էր շուկայից արտարժույթի գնման միջոցով ներարկված դրամային իրացվելիության չեզոքացմանը: Այսպիսով Կենտրոնական բանկը ներքաշել է 2.9 մլրդ դրամի ավելցուկային իրացվելիություն:

Հուլիսին ևս ավելցուկի ներքաշման նպատակով ԿԲ գործիքակազմում շարունակել են ակտիվորեն կիրառվել հակադարձ ռեպո գործառնությունները՝ ներառելով Կենտրոնական բանկի պետարժեթղթերի ողջ պորտֆելը: Մշտական հնարավորության ավանդային գործիքը նույնպես ամսվա ընթացքում բավականին ակտիվ է եղել, թեև ամսվա կտրվածքով այս գործիքի միջոցով ներքաշվել է ընդամենը 250 մլն դրամ:

Փողի առաջարկի կարգավորման վերոնշյալ գործողությունների ազդեցությամբ ամսվա ընթացքում դիտվել է կանխիկացման ակտիվ գործընթաց, ինչն արտահայտվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի աննախադեպ մեծ աճով՝ 11.0 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, փողի բազայի կառուցվածքում 2.8 մլրդ և 4.9 մլրդ դրամով աճել են դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվների միջոցները: Արդյունքում՝ դրամային ավելցուկի մակարդակն ամսվա ընթացքում աճել է՝ նախորդ ամսվա միջին ամսական 11.4 մլրդ դրամից հասնելով 14.6 մլրդ դրամի, իսկ արտարժութային ավելցուկը՝ 1.0 մլրդ դրամից 4.4 մլրդ դրամի:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) հուլիսին աճել է 23.3 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 325.8 մլրդ դրամ: Փողի պահանջարկի աճը հիմնականում դրսևորվել է դրամային տարրերի գծով՝ 17.7 մլրդ դրամ (դրամային զանգվածի մակարդակը հուլիսի վերջին՝ 181.9 մլրդ դրամ), ինչը բաշխվել է շրջանառությունում գտնվող կանխիկի և ավանդների միջև համապատասխանաբար 11.3 մլրդ և 6.4 մլրդ դրամ հարաբերակցությամբ: Արտարժութային ավանդներն աճել են 5.6 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 143.9 մլրդ դրամ: Ընդ որում, և՛ դրամով, և՛ արտարժույթով ավանդների շարժում գերակշռել են ցպահանջ միջոցների փոփոխությունները՝ համապատասխանաբար 6.2 մլրդ և 3.4 մլրդ դրամի աճ:

Հուլիսի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչների մակարդակները կազմել են համապատասխանաբար 1.93՝ նախորդ ամսվա 2.0-ի և 1.1՝ 1.09-ի փոխարեն:

ՊՊ առաջնային շուկայում կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.72 տոկոսային կետով՝ կազմելով 4.07%, իսկ միջնաժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 0.38 տոկոսային կետով՝ կազմելով 5.32%: Տեղաբաշխվել է նաև 5 տարի ժամկետայնությամբ միջնաժամկետ պարտատոմսերի 1 թողարկում՝ 5.94 %-ով:

Եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով եկամտաբերությունը նվազել է միջինը 0.07 տոկոսային կետով. մասնավորապես կարճ ժամկետայնության հատվածում գրանցվել է միջինը 0.05 տոկոսային կետով եկամտաբերության անկում, իսկ երկար ժամկետայնության հատվածում՝ 0.08 տոկոսային կետով:

2005 թ. հունվար-հուլիսին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 460.0 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 16.9%-ով: Հուլիսին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 442.6 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով շուրջ 1.4%-ով: 2005 թ. հունվար-հուլիսին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը եվրոյի նկատմամբ կազմել է 586.8 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 13.6 %-ով: Հուլիսին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 533.7 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով 2.3%-ով:

Արժութային շուկայում առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 127.142 մլն և 132.662 մլն ԱՄՆ դոլար, իսկ միջին կշռված փոխարժեքը՝ 441.61 դրամ, որը նախորդ ամսվա միջին փոխարժեքի համեմատ արժեքավորվել է 1.63%-ով:

Ինչպես նախորդ ամիսներին, հուլիսին նույնպես ՀՀ կենտրոնական բանկը հանդես է եկել դրամային, մասնավորապես հակադարձ ռեպո գործառնությունների իրականացման հայտարարությամբ: Հուլիսին ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվել է 6023 մլն դրամի հակադարձ ռեպո գործարք՝ սահմանված 3.75% եկամտաբերությամբ, ներգրավվել է նաև 5900 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% եկամտաբերությամբ: Ամսվա ընթացքում իրացվելիության ավելցուկի չեզոքացման նպատակով Կենտրոնական բանկը տեղաբաշխել է սեփական արժեթուղթ՝ 2.9 մլրդ դրամ անվանական արժեքով, 4.82% միջին ամսական եկամտաբերությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից հուլիսին դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները մնացել են անփոփոխ: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է 18%:

### *I. Իրական հատված*

| *Անվանում* | *Հունվար-հունիս* | *2005թ. հունվար-հունիսի իրական աճի ինդեքսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)* | *Հունվար-հուլիս* | *2005թ. հունվար-հուլիսի իրական աճի ինդեքսը 2004թ. հունվար-հուլիսի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)* | 704668.2 | 110.2 | 915109.9 | 111.6 |
| ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)* | | 106.0 | | 103.7 |
| Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1] | 636.7 | 111.2 | 824.6 | 112.4 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)* | 306720.4 | 105.3 | 361997.4 | 106.3 |
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)* | 3345.8 | 104.1 | 3828.4 | 104.0 |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)* | 103604.1 | 110.2 | 184544.8 | 114.1 |
| Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)* | 353432.8 | 105.1 | 426115.1 | 105.3 |
| Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)* | 116479.0 | 143.0 | 156503.8 | 126.8 |
| Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)* | 589685.4 | 109.3[1] | 717878.5 | 110.6 [1] |
| Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)* | 581827.1 | 105.9[1] | 698998.2 | 106.6[1] |
| Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)* | 49379 | 120.8[1] | 49762[2] | 121.6 [1] |
| Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)* | 1210.6 | | 1212.6 | |
| Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)* | 103.9 | | 102.8 | |
| Գործազրկության մակարդակը *(%)* | 8.6 | | 8.5 | |

### *II. Արտաքին հատված*

| *Անվանում* | *Հունվար-հունիս (մլն ԱՄՆ դոլար)* | *2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)* | *Հունվար-հուլիս (մլն ԱՄՆ դոլար)* | *2005թ. հունվար-հուլիսը 2004թ. հունվար-հուլիսի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Արտահանում *(ՖՕԲ)* | 429.1 | 128.4 | 523.0 | 131.9 |
| Ներմուծում *(ՍԻՖ)* | 788.0 | 126.2 | 933.2 | 128.2 |
| Առևտրային հաշվեկշռի պակասուրդ | 358.8 | 123.6 | 410.2 | 123.8 |

### *III. Գների ինդեքսներ*

| *Ժամանակաշրջան* | *Սպառողական գների ինդեքս* | *Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս* | *Գների ինդեքս կապիտալ շինարարությունում* | *Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս* |
|---|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 105.4 | 100.5 | 100.7 | 98.2 |
| Փետրվար | 99.3 | 94.8 | 99.9 | 98.4 |
| Մարտ | 99.1 | 101.2 | 122.9 | 99.6 |
| Ապրիլ | 99.1 | 97.4 | 99.9 | 97.3 |
| Մայիս | 100.1 | 99.9 | 100.0 | 97.6 |
| Հունիս | 98.6 | 101.8 | 100.1 | 79.3 |
| Հուլիս | 95.5 | 96.3 | 100.1 | 81.8 |
| 2005 թ. հունվար – հուլիսը 2004 թ. հունվար – հուլիսի համեմատությամբ | 101.5 | 111.1 | 116.4 | 85.8 |

* *Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

## *IV. Գնաճ*

| *ժամանակաշրջան* | *2003* | *2004* | *2005* | *2005* |
|---|---|---|---|---|
| | *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | *նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)* |
| Հունվար | 4.1 | 2.5 | 5.4 | 5.4 |
| Փետրվար | -1.5 | -0.6 | -0.7 | 4.7 |
| Մարտ | -0.5 | 0.3 | -0.9 | 3.7 |
| Ապրիլ | 2.0 | 1.2 | -0.9 | 2.8 |
| Մայիս | 1.2 | 1.1 | 0.1 | 2.9 |
| Հունիս | 1.4 | -0.1 | -1.4 | 1.4 |
| Հուլիս | -5.5 | -2.5 | -4.5 | -3.1 |
| Օգոստոս | -2.3 | -2.4 | | |
| Սեպտեմբեր | 2.5 | -0.7 | | |
| Հոկտեմբեր | -0.1 | 0.1 | | |
| Նոյեմբեր | 2.2 | 0.8 | | |
| Դեկտեմբեր | 5.2 | 2.3 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)* | 8.6 | 2.0 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)* | 4.7 | 7.0 | | |

## *V. Բնակառնոն գնաճի փոփոխությունները* [1]

| **Ցուցանիշ** | **2003** | **2004** | **2005** |
|---|---|---|---|
| | *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | |
| Հունվար | 0.69 | 0.65 | 0.71 |
| Փետրվար | -0.46 | 0.05 | -0.37 |
| Մարտ | 0.00 | 0.03 | -0.26 |
| Ապրիլ | 0.23 | 0.05 | -0.26 |
| Մայիս | 0.06 | 0.04 | -0.08 |
| Հունիս | 0.61 | -0.13 | -0.10 |
| Հուլիս | -0.55 | -0.50 | -0.42 |
| Օգոստոս | -0.18 | -0.31 | |
| Սեպտեմբեր | 1.20 | -0.30 | |
| Հոկտեմբեր | 0.04 | -0.16 | |
| Նոյեմբեր | 0.94 | -0.05 | |
| Դեկտեմբեր | 2.07 | 0.30 | |
| | *նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)* | | |
| Հունվար | 1.16 | 4.45 | 0.72 |
| Փետրվար | 0.86 | 5.60 | 1.07 |
| Մարտ | 1.04 | 6.37 | 0.71 |
| Ապրիլ | 0.37 | 6.39 | 0.13 |
| Մայիս | 0.49 | 6.23 | -0.74 |
| Հունիս | 2.44 | 5.41 | -0.57 |
| Հուլիս | 2.26 | 6.71 | -0.78 |
| Օգոստոս | 2.61 | 6.90 | |
| Սեպտեմբեր | 5.33 | 6.02 | |
| Հոկտեմբեր | 4.65 | 5.67 | |
| Նոյեմբեր | 4.23 | 4.39 | |
| Դեկտեմբեր | 4.67 | 0.55 | |

## *VI. Բնակառնոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները* [1]

| **Անվանում** | ***Նպաստումը բնակառնոն գնաճին, տոկոսային կետ*** |
|---|---|
| | *նախորդ ամսվա նկատմամբ* |
| **Բնակառնոն գնաճ.** *այդ թվում* | **-0.42** |
| բուսական յուղ (արևածաղկի) | -0.04 |
| ալյուր առաջին տեսակի | -0.03 |
| շաքարավազ | -0.03 |
| հաց առաջին տեսակի | -0.03 |
| պանիր «Չանախ» | -0.02 |
| հաց բարձր տեսակի | -0.02 |
| բրինձ | -0.02 |
| ալյուր բարձր տեսակի | -0.02 |
| մակարոն | -0.01 |
| տավարի միս | -0.01 |


*[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
*[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

## *ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* [1]

*(մլն ՀՀ դրամ)*

| Ժամանակաշրջան | Պահանջներ Կառավարության նկատմամբ | | | Կառավարության ավանդներ | | | | | Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] | Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պետական կարճաժամկետ պարտատոմսեր | պետական արժե-կտրոնային պարտատոմսեր | ընդամենը | կենսաթոշ. և ապահովագր. հաշիվներ և ավանդներ | կենսաթոշ. հաշիվներ արտարժ. | ՕՀԳ-երի միջոցներ դրամով | ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով | ընդամենը | | |
| ***2004*** | | | | | | | | | | |
| Դեկտեմբեր [4] | 193 | 5711 | 5904 | 42512 | 126 | 0 | 97 | 42735 | **-36830** | ***-36815*** |
| ***2005*** | | | | | | | | | | |
| Հունվար | 193 | 5658 | 5852 | 63919 | 124 | 0 | 97 | 64141 | **-58289** | ***-58268*** |
| Փետրվար | 193 | 5598 | 5792 | 64629 | 122 | 0 | 98 | 64849 | **-59057** | ***-59162*** |
| Մարտ [4] | 193 | 5526 | 5719 | 65220 | 119 | 90 | 99 | 65528 | **-59809** | ***-60054*** |
| Ապրիլ | 193 | 6783 | 6977 | 71670 | 114 | 35 | 98 | 71917 | **-64941** | ***-65255*** |
| Մայիս | 193 | 6543 | 6736 | 67461 | 115 | 29 | 100 | 67706 | **-60969** | ***-61476*** |
| Հունիս [4] | 135 | 6402 | 6537 | 60819 | 115 | 29 | 108 | 61071 | **-54534** | **-55050** |
| Հուլիս | 135 | 6321 | 6456 | 54990 | 116 | 29 | 110 | 55245 | **-48789** | ***-49300*** |


*[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*
*[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:*
*[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*
*[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*



## *ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ*[1]

*(մլն ՀՀ դրամ)*

| **Ժամկետ** | **Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ** [2] | **ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ** [3] | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| ***2004*** | | | |
| Դեկտեմբեր | 12221 | 42735 | 54956 |
| ***2005*** | | | |
| Հունվար | 15029 | 64141 | 79170 |
| Փետրվար | 17396 | 64849 | 82245 |
| Մարտ | 15408 | 65528 | 80936 |
| Ապրիլ | 15917 | 71917 | 87834 |
| Մայիս | 17012 | 67706 | 84718 |
| Հունիս | 17327 | 61071 | 78398 |
| Հուլիս | 16754 | 55245 | 72000 |




[1] *Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:*

[2] *Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:*

[3] *Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՕԻԳ-երի միջոցները:*

## *ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ*

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 04 [4] | Հ - 05 | Փ - 05 | Մ - 05 [4] | Ա - 05 | Մ - 05 | Հ - 05[4] | Հ - 05 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** [1,2] | ***149266*** | ***160018*** | ***165260*** | ***171489*** | ***180578*** | ***182491*** | ***201173*** | ***216726*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-17216*** | ***-42573*** | ***-48403*** | ***-47871*** | ***-50196*** | ***-44718*** | ***-50354*** | ***-47115*** |
| Կառավարություն | -36830 | -58289 | -59057 | -59809 | -64941 | -60969 | -54534 | -48789 |
| Բանկեր | 10857 | 9653 | 5100 | 5064 | 8339 | 8192 | 2882 | 4127 |
| այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր | 1157 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ավանդներ (-) | -2000 | -700 | -6600 | -4100 | -2000 | -1500 | -1300 | -1550 |
| Հակադարձ ռեպո (-) | 0 | -1347 | 0 | -2536 | -1361 | -2008 | -6470 | -6023 |
| ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | -1049 | 0 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-) | | | | | | | -3453 | -6330 |
| Զուտ այլ ակտիվներ | 8757 | 6063 | 5554 | 6874 | 6406 | 8059 | 4751 | 3 877 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)*** [3] | ***129830*** | ***117152*** | ***119542*** | ***123374*** | ***129198*** | ***137449*** | ***153985*** | ***169682*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** | ***132050*** | ***117444*** | ***116857*** | ***123618*** | ***130382*** | ***137773*** | ***150819*** | ***169611*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | 105534 | 91268 | 92635 | 98827 | 105457 | 110017 | 113392 | 124414 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | 25800 | 25604 | 23700 | 23834 | 24338 | 27195 | 18102 | 20950 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | | | | | | | 18773 | 23672 |
| Այլ հաշիվներ | 716 | 572 | 521 | 957 | 586 | 561 | 552 | 574 |
| Այլ հաշիվներ (ՀՀ դրամով) | 561 | 529 | 507 | 588 | 578 | 561 | 552 | 571 |
| Այլ հաշիվներ (արտարժույթով) | 155 | 43 | 14 | 369 | 8 | 0 | 1 | 4 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***10752*** | ***5242*** | ***6229*** | ***9089*** | ***1913*** | ***18682*** | ***15553*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***-25357*** | ***-5829*** | ***532*** | ***-2326*** | ***5478*** | ***-5636*** | ***3239*** |
| Կառավարություն | - | -21459 | -768 | -752 | -5132 | 3972 | 6435 | 5745 |
| Բանկեր | - | -1204 | -4553 | -36 | 3275 | -147 | -5310 | 1246 |
| այդ թվում՝ ավանդներ (-) | - | -1300 | 5900 | -2500 | -2100 | -500 | -200 | 250 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր | | | | | | | 3453 | 2877 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -2694 | -508 | 1320 | -468 | 1653 | -3309 | -875 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)*** [3] | **-** | ***-12679*** | ***2390*** | ***3832*** | ***5824*** | ***8251*** | ***16536*** | ***15697*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** | **-** | ***-14606*** | ***-587*** | ***6761*** | ***6764*** | ***7391*** | ***13046*** | ***18792*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | -14265 | 1367 | 6192 | 6630 | 4560 | 3375 | 11022 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | - | -196 | -1904 | 134 | 505 | 2857 | -9093 | 2848 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | | | | | | | 18773 | 4899 |
| Այլ հաշիվներ | - | -144 | -51 | 436 | -371 | -25 | -9 | 22 |
| Այլ հաշիվներ (ՀՀ դրամով) | - | -33 | -21 | 81 | -10 | -17 | -9 | 19 |
| Այլ հաշիվներ (արտարժույթով) | - | -112 | -29 | 355 | -361 | -8 | 1 | 3 |
| *(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***7.2*** | ***3.3*** | ***3.8*** | ***5.3*** | ***1.1*** | ***10.2*** | ***7.7*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***-147.3*** | ***-13.7*** | ***1.1*** | ***-4.9*** | ***10.9*** | ***-12.6*** | ***6.4*** |
| Կառավարություն | - | -58.3 | -1.3 | -1.3 | -8.6 | 6.1 | 10.6 | 10.5 |
| Բանկեր | - | -11.1 | -47.2 | -0.7 | 64.7 | -1.8 | -64.8 | 43.2 |
| ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր | | | | | | | 100.0 | 83.3 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -30.8 | -8.4 | 23.8 | -6.8 | 25.8 | -41.0 | -18.4 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)*** [3] | **-** | ***-9.8*** | ***2.0*** | ***3.2*** | ***4.7*** | ***6.4*** | ***12.0*** | ***10.2*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** [4] | **-** | ***-11.1*** | ***-0.5*** | ***5.8*** | ***5.5*** | ***5.7*** | ***9.5*** | ***12.5*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | -13.5 | 1.5 | 6.7 | 6.7 | 4.3 | 3.1 | 9.7 |
| Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով) | - | -0.8 | -7.4 | 0.6 | 2.1 | 11.7 | -33.4 | 15.7 |
| Պարտադիր պահուստ. (արտարժույթով) | | | | | | | 100 | 26.1 |
| Այլ հաշիվներ | - | -20.2 | -8.8 | 83.6 | -38.8 | -4.3 | -1.6 | 4.0 |

*[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

*[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:*

*[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:*

*[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## *ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ*

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 04 | Հ – 05 | Փ – 05 | Մ –05 | Ա - 05 | Մ - 05 | Հ - 05 | Հ - 05 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)** | **55829** | **56969** | **53242** | **50846** | **44797** | **43228** | **35555** | **35784** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 117646 | 117724 | 113184 | 107917 | 99969 | 101800 | 97621 | 102216 |
| Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով | -57154 | -56395 | -56223 | -53699 | -50917 | -53614 | -56815 | -61003 |
| Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով | -4663 | -4360 | -3719 | -3373 | -4255 | -4958 | -5251 | -5430 |
| **ԶՆԱ** | **130829** | **130156** | **129619** | **135579** | **139351** | **144583** | **161895** | **173764** |
| Կառավարություն | 19598 | 20248 | 18730 | 24151 | 27842 | 28571 | 29458 | 29546 |
| Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ | 20989 | 24849 | 25598 | 25777 | 22542 | 26514 | 44943 | 53884 |
| Պահուստային ակտիվներ | 34083 | 36625 | 37449 | 37707 | 34319 | 38370 | 56874 | 65660 |
| Պարտավորություններ ԿԲ նկատմամբ | -13094 | -11776 | -11851 | -11930 | -11777 | -11856 | -11930 | -11776 |
| Տնտեսություն | 142426 | 136997 | 136586 | 141043 | 143390 | 150247 | 154759 | 157621 |
| Ձեռնարկություններ | 80113 | 75460 | 72354 | 73767 | 75828 | 78213 | 80799 | 81704 |
| Դրամով | 27361 | 24391 | 24240 | 24542 | 26419 | 27473 | 28554 | 30423 |
| Արտարժույթով | 49224 | 47601 | 48094 | 49206 | 49389 | 50721 | 52220 | 51256 |
| Արժեթղթեր | 3529 | 3468 | 20 | 20 | 19 | 19 | 25 | 25 |
| Տնային տնտեսություններ | 56001 | 55202 | 57624 | 60323 | 62354 | 66074 | 68114 | 70021 |
| Դրամով | 14325 | 13445 | 13999 | 15426 | 17122 | 18152 | 19618 | 21077 |
| Արտարժույթով | 41676 | 41757 | 43625 | 44897 | 45232 | 47921 | 48496 | 48944 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | 42 | 46 | 31 | 29 | 38 | 44 | 48 | 53 |
| Դրամով | 25 | 25 | 22 | 19 | 23 | 29 | 32 | 38 |
| Արտարժույթով | 17 | 21 | 10 | 10 | 15 | 15 | 16 | 16 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | 6269 | 6289 | 6576 | 6924 | 5170 | 5916 | 5798 | 5842 |
| Դրամով | 2042 | 1984 | 2522 | 3082 | 2019 | 3360 | 4266 | 4535 |
| Արտարժույթով | 4227 | 4305 | 4054 | 3843 | 3152 | 2557 | 1532 | 1307 |
| Այլ ռեզիդենտներ[1] | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դրամով | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Արտարժույթով | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ այլ ակտիվներ | -52183 | -51938 | -51296 | -55392 | -54423 | -60749 | -67266 | -67287 |
| Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով | 1836 | 1572 | 1604 | 1600 | 1289 | 1343 | 1478 | 1356 |
| Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.) | 3052 | 2249 | 2279 | 1785 | 2804 | 2073 | 2366 | 2722 |
| Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.) | -799 | -656 | -857 | -796 | -1189 | -887 | -950 | -1097 |
| Ներդրումներ փայաբաժիններում | 445 | 445 | 445 | 457 | 459 | 470 | 478 | 493 |
| Միջբանկային պահանջներ | 6097 | 4139 | 3242 | 3721 | 10616 | 12318 | 6927 | 5496 |
| Այլ ակտիվներ | 32887 | 33359 | 36639 | 39005 | 41313 | 42027 | 43286 | 44392 |
| Միջբանկային պարտավորություններ | -5530 | -3617 | -2793 | -3265 | -10156 | -11498 | -5738 | -4897 |
| Դրամական շուկայի գործիքներ | -3406 | -3371 | -3335 | -3207 | -3091 | -3150 | -3407 | -3469 |
| Կապիտալ հաշիվներ | -68842 | -68635 | -70214 | -73661 | -76607 | -79060 | -80479 | -82328 |
| Այլ պարտավորություններ | -17924 | -17423 | -18305 | -21031 | -19861 | -24386 | -31227 | -29954 |
| **ԱՎԱՆԴՆԵՐ** | **186659** | **187126** | **182861** | **186424** | **184148** | **187812** | **197450** | **209548** |
| Դրամով ավանդներ | 46588 | 47838 | 49712 | 53477 | 56067 | 58176 | 58632 | 65052 |
| Ցպահանջ ավանդներ | 33283 | 32250 | 35629 | 36675 | 38203 | 40048 | 41257 | 47455 |
| Ժամկետային ավանդներ | 13304 | 15588 | 14083 | 16802 | 17864 | 18127 | 17375 | 17597 |
| Ավանդներ արտարժույթով | 140071 | 139288 | 133149 | 132947 | 128080 | 129636 | 138818 | 144496 |
| Ցպահանջ ավանդներ | 74453 | 71481 | 66296 | 69120 | 64726 | 64956 | 74368 | 77817 |
| Ժամկետային ավանդներ | 65618 | 67807 | 66853 | 63827 | 63354 | 64680 | 64450 | 66679 |

*[1] Չդասակարգված պահանջներ. «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում.*

## *ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ*

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 04 [5] | Հ - 05 | Փ - 05 | Մ - 05 [5] | Ա - 05 | Մ - 05 | Հ - 05 [5] | Հ - 05 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** [1] | ***205095*** | ***216987*** | ***218502*** | ***222334*** | ***225375*** | ***225720*** | ***236728*** | ***252510*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***80848*** | ***52841*** | ***49899*** | ***56461*** | ***57900*** | ***64680*** | ***66568*** | ***74175*** |
| Կառավարություն | -17232 | -38041 | -40327 | -35659 | -37099 | -32398 | -25076 | -19243 |
| Տնտեսություն | 142469 | 137037 | 136622 | 141075 | 143419 | 150274 | 154784 | 157644 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | 80114 | 75460 | 72355 | 73767 | 75828 | 78213 | 80799 | 81704 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 651 | 637 | 565 | 667 | 667 | 714 | 720 | 778 |
| Տնային տնտեսություններ | 56044 | 55241 | 57659 | 60354 | 62383 | 66100 | 68139 | 70045 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 790 | 854 | 880 | 945 | 954 | 1057 | 1067 | 1144 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | 42 | 46 | 31 | 29 | 38 | 44 | 48 | 53 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | 6269 | 6289 | 6576 | 6924 | 5170 | 5916 | 5798 | 5842 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 48 | 36 | 36 | 42 | 27 | 28 | 22 | 16 |
| Զուտ այլ ակտիվներ | -44388 | -46154 | -46395 | -48955 | -48420 | -53196 | -63140 | -64226 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** [2] | ***145538*** | ***130296*** | ***135012*** | ***145246*** | ***154908*** | ***160536*** | ***164245*** | ***181909*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտակված տոկոսների)* | ***285172*** | ***269000*** | ***267511*** | ***277883*** | ***282339*** | ***289595*** | ***302525*** | ***325786*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** [3] | ***285943*** | ***269828*** | ***268401*** | ***278796*** | ***283275*** | ***290399*** | ***303296*** | ***326685*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | 98569 | 82131 | 85019 | 91415 | 98541 | 102027 | 105294 | 116563 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4] | 33845 | 32778 | 36136 | 37263 | 38781 | 40610 | 41809 | 48026 |
| կուտակված տոկոսներ | 38 | 41 | 53 | 43 | 49 | 33 | 17 | 32 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | 13304 | 15588 | 14083 | 16802 | 17864 | 18127 | 17375 | 17597 |
| կուտակված տոկոսներ | 142 | 160 | 173 | 191 | 230 | 194 | 215 | 245 |
| Արտարժույթով ավանդներ | 140226 | 139331 | 133163 | 133316 | 128088 | 129636 | 138819 | 144499 |
| Ցպահանջ [4] | 74607 | 71525 | 66310 | 69489 | 64733 | 64956 | 74369 | 77821 |
| կուտակված տոկոսներ | 52 | 55 | 65 | 51 | 60 | 36 | 9 | 42 |
| Ժամկետային | 65618 | 67807 | 66853 | 63827 | 63354 | 64680 | 64450 | 66679 |
| կուտակված տոկոսներ | 539 | 573 | 599 | 627 | 597 | 541 | 530 | 580 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***11892*** | ***1515*** | ***3832*** | ***3040*** | ***345*** | ***11008*** | ***15782*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***-28007*** | ***-2942*** | ***6562*** | ***1439*** | ***6780*** | ***1888*** | ***7607*** |
| Կառավարություն | - | -20809 | -2286 | 4668 | -1440 | 4701 | 7322 | 5833 |
| Տնտեսություն | - | -5432 | -415 | 4453 | 2344 | 6855 | 4511 | 2860 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | - | -4654 | -3105 | 1413 | 2061 | 2385 | 2586 | 905 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | -15 | -72 | 102 | 0 | 47 | 7 | 58 |
| Տնային տնտեսություններ | - | -802 | 2418 | 2695 | 2028 | 3718 | 2039 | 1906 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 64 | 25 | 65 | 10 | 102 | 10 | 77 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | - | 4 | -15 | -3 | 9 | 6 | 4 | 5 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | - | 20 | 287 | 348 | -1754 | 746 | -118 | 44 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | -12 | 0 | 6 | -15 | 1 | -6 | -6 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -1766 | -241 | -2560 | 535 | -4776 | -9945 | -1086 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** | **-** | ***-15242*** | ***4716*** | ***10234*** | ***9662*** | ***5628*** | ***3709*** | ***17664*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտակված տոկոսների)* | **-** | ***-16173*** | ***-1488*** | ***10372*** | ***4456*** | ***7256*** | ***12930*** | ***23261*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** | **-** | ***-16115*** | ***-1427*** | ***10395*** | ***4479*** | ***7125*** | ***12897*** | ***23389*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | - | -16438 | 2889 | 6395 | 7126 | 3486 | 3268 | 11269 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | - | -1067 | 3358 | 1127 | 1518 | 1828 | 1199 | 6217 |
| կուտակված տոկոսներ | - | 3 | 12 | -10 | 6 | -15 | -16 | 15 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | - | 2284 | -1505 | 2720 | 1062 | 263 | -753 | 222 |
| կուտակված տոկոսներ | - | 18 | 13 | 18 | 39 | -35 | 21 | 30 |
| Արտարժույթով ավանդներ | - | -894 | -6168 | 153 | -5228 | 1548 | 9183 | 5680 |
| Ցպահանջ | - | -3083 | -5215 | 3179 | -4755 | 222 | 9413 | 3452 |
| կուտակված տոկոսներ | - | 2 | 10 | -13 | 9 | -24 | -27 | 33 |
| Ժամկետային | - | 2188 | -953 | -3027 | -472 | 1326 | -230 | 2229 |
| կուտակված տոկոսներ | - | 34 | 26 | 28 | -30 | -56 | -11 | 50 |

| (տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ) | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***5.8*** | ***0.7*** | ***1.8*** | ***1.4*** | ***0.2*** | ***4.9*** | ***6.7*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***-34.6*** | ***-5.6*** | ***13.2*** | ***2.5*** | ***11.7*** | ***2.9*** | ***11.4*** |
| Կառավարություն | - | -120.8 | -6.0 | 11.6 | -4.0 | 12.7 | 22.6 | 23.3 |
| Տնտեսություն | - | -3.8 | -0.3 | 3.3 | 1.7 | 4.8 | 3.0 | 1.8 |
| Ձեռնարկ. և կազմակերպ. | - | -5.8 | -4.1 | 2.0 | 2.8 | 3.1 | 3.3 | 1.1 |
| Տնային տնտեսություններ | - | -1.4 | 4.4 | 4.7 | 3.4 | 6.0 | 3.1 | 2.8 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | - | 10.0 | -32.1 | -8.1 | 31.0 | 16.6 | 8.6 | 11.4 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | - | 0.3 | 4.6 | 5.3 | -25.3 | 14.4 | -2.0 | 0.8 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -4.0 | -0.5 | -5.5 | 1.1 | -9.9 | -18.7 | -1.7 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** | - | ***-10.5*** | ***3.6*** | ***7.6*** | ***6.7*** | ***3.6*** | ***2.3*** | ***10.8*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտակված տոկոսների)* | - | ***-5.7*** | ***-0.6*** | ***3.9*** | ***1.6*** | ***2.6*** | ***4.5*** | ***7.7*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** | - | ***-5.6*** | ***-0.5*** | ***3.9*** | ***1.6*** | ***2.5*** | ***4.4*** | ***7.7*** |
| Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | - | -16.7 | 3.5 | 7.5 | 7.8 | 3.5 | 3.2 | 10.7 |
| Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | - | -3.2 | 10.2 | 3.1 | 4.1 | 4.7 | 3.0 | 14.9 |
| Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | - | 17.2 | -9.7 | 19.3 | 6.3 | 1.5 | -4.2 | 1.3 |
| Արտարժույթով ավանդներ | - | -0.6 | -4.4 | 0.1 | -3.9 | 1.2 | 7.1 | 4.1 |
| Ցպահանջ | - | -4.1 | -7.3 | 4.8 | -6.8 | 0.3 | 14.5 | 4.6 |
| Ժամկետային | - | 3.3 | -1.4 | -4.5 | -0.7 | 2.1 | -0.4 | 3.5 |

*[1] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱՄ-ն փաստացի փոխարժեքներով:*

*[2] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):*

*[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*

*[4] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:*

*[5] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

*(մլն ՀՀ դրամ)*


| Ժամկետ | Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | M1 [3] | Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | M2 [4] | Արտարժույթով ավանդներ | M2X [5] |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2004** | | | | | | | |
| Դեկտեմբեր | 98569 | 33807 | 132376 | 13162 | 145538 | 139634 | 285172 |
| **2005** | | | | | | | |
| Հունվար | 82131 | 32738 | 114869 | 15428 | 130296 | 138703 | 269000 |
| Փետրվար | 85019 | 36083 | 121103 | 13910 | 135012 | 132499 | 267511 |
| Մարտ | 91415 | 37220 | 128635 | 16611 | 145246 | 132637 | 277883 |
| Ապրիլ | 98541 | 38733 | 137273 | 17635 | 154908 | 127431 | 282339 |
| Մայիս | 102027 | 40576 | 142603 | 17933 | 160536 | 129059 | 289595 |
| Հունիս | 105294 | 41791 | 147086 | 17160 | 164245 | 138280 | 302525 |
| Հուլիս | 116563 | 47994 | 164557 | 17352 | 181909 | 143877 | 325786 |


## ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [2]


*(մլն ՀՀ դրամ)*


| Ժամկետ | Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | M1 [3] | Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | M2 [4] | Արտարժույթով ավանդներ | M2X [5] |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2004** | | | | | | | |
| Դեկտեմբեր | 98569 | 33845 | 132414 | 13304 | 145718 | 140226 | 285943 |
| **2005** | | | | | | | |
| Հունվար | 82131 | 32778 | 114909 | 15588 | 130497 | 139331 | 269828 |
| Փետրվար | 85019 | 36136 | 121156 | 14083 | 135238 | 133163 | 268401 |
| Մարտ | 91415 | 37263 | 128678 | 16802 | 145480 | 133316 | 278796 |
| Ապրիլ | 98541 | 38781 | 137322 | 17864 | 155187 | 128088 | 283275 |
| Մայիս | 102027 | 40610 | 142636 | 18127 | 160764 | 129636 | 290399 |
| Հունիս | 105294 | 41809 | 147103 | 17375 | 164477 | 138819 | 303296 |
| Հուլիս | 116563 | 48026 | 164589 | 17597 | 182186 | 144499 | 326685 |


*[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:*
*[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:*
*[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):*
*[4] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:*
*[5] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):*



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
Փողի բազա
Օրագիր
Օրագիր՝ +2%
Օրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
65
60
55
50
45
40
35
30
25
99
00
01
02
03
04
05


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
95
90
85
80
75
70
65
60
99
00
01
02
03
04
05


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
02
03
04
05
Փողի բազա
Գնաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
15
10
5
0
-5
-10
02
03
04
05
Փողի զանգված
Գնաճ


## *ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ*[1]

*(մլն ՀՀ դրամ)*


| ժամկետ | Փողի բազա | Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | M1 | M2 | M2X |
|---|---|---|---|---|---|
| ***2004*** | | | | | |
| Դեկտեմբեր | 118742 | 87328 | 120859 | 135356 | 274203 |
| ***2005*** | | | | | |
| Հունվար | 116919 | 80711 | 112024 | 127674 | 264176 |
| Փետրվար | 120171 | 86956 | 124686 | 137967 | 272280 |
| Մարտ | 127999 | 93709 | 133916 | 149487 | 281344 |
| Ապրիլ | 134550 | 102563 | 143076 | 159872 | 292963 |
| Մայիս | 141412 | 106066 | 146487 | 163066 | 296774 |
| Հունիս | 157781 | 109642 | 152672 | 169249 | 310411 |
| Հուլիս | 169397 | 115789 | 164112 | 182292 | 326824 |

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
*Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:*
*Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:*


## Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները





## Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե




## Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները





## Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

*(մլն ՀՀ դրամ)*

| Ցուցանիշներ | 2004 | 2005 | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ[3] | Հ | Փ | Մ[3] | Ա | Մ | Հ[3] | Հ |
| Կենտրոնական բանկի ԶԱԱ | 149266 | 160018 | 165260 | 171489 | 180578 | 182491 | 201173 | 216726 |
| Առևտրային բանկերի ԶԱԱ | 55829 | 56969 | 53242 | 50846 | 44797 | 43228 | 35555 | 35784 |
| Ընդամենը | 205095 | 216987 | 218502 | 222334 | 225375 | 225720 | 236728 | 252510 |
| ***Կենտրոնական բանկի ԶԱԱ [2]*** | ***150341*** | ***161160*** | ***166382*** | ***172394*** | ***181915*** | ***184411*** | ***203236*** | ***219505*** |




[1] *ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:*

[2] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

## ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 04 | Հ - 05 | Փ - 05 | Մ - 05 | Ա - 05 | Մ - 05 | Հ - 05 | Հ - 05 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)** | **-983** | **-1101** | **-943** | **-851** | **-853** | **-1481** | **-1588** | **-1558** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 331 | 229 | 119 | 160 | 168 | 209 | 247 | 146 |
| Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ. | -1314 | -1329 | -1062 | -1010 | -1021 | -1691 | -1835 | -1704 |
| Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով | - | - | - | - | - | - | - | - |
| **ԶՆԱ** | **1373** | **1451** | **1373** | **1280** | **1308** | **2036** | **2100** | **2141** |
| Կառավարություն | -107 | -103 | -102 | -99 | -96 | -97 | -83 | -83 |
| Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ | 1059 | 1157 | 1001 | 756 | 612 | 899 | 879 | 1290 |
| Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ | 1363 | 1459 | 1301 | 1052 | 922 | 1139 | 1172 | 1529 |
| Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ | -304 | -302 | -300 | -296 | -310 | -240 | -292 | -239 |
| Տնտեսություն | 3622 | 3494 | 3829 | 3997 | 4077 | 4380 | 4607 | 4934 |
| Ջեռնարկություններ | 1815 | 1581 | 1688 | 1697 | 1699 | 1924 | 2183 | 2367 |
| Դրամով | 773 | 557 | 550 | 543 | 537 | 552 | 636 | 664 |
| Արտարժույթով | 1042 | 1025 | 1138 | 1154 | 1163 | 1372 | 1547 | 1703 |
| Արժեթղթեր | - | - | - | - | - | - | - | - |
| Տնային տնտեսություններ | 1781 | 1891 | 2120 | 2155 | 2235 | 2315 | 2378 | 2546 |
| Դրամով | 755 | 709 | 730 | 755 | 828 | 850 | 868 | 916 |
| Արտարժույթով | 1026 | 1182 | 1390 | 1400 | 1407 | 1465 | 1510 | 1629 |
